ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արտակ Զեյնալյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն), 2018թ. հուլիսի 25-28-ը:

Հրավիրող կողմը՝ ԱՄՆ Պետքարտուղարություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն կրոնական ազատությունների հարցերով նախարարական անդրանիկ հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ Կրոնական ազատություններին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը 2018թ. հուլիսի 25-27-ը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոն կատարած այցի շրջանակներում ս.թ. հուլիսի 26-ին մասնակցել է Կրոնական ազատությունների հարցերով նախարարական անդրանիկ հանդիպմանը, որը նախաձեռնվել էր ԱՄՆ Պետքարտուղար Մայքլ Պոմպեոյի կողմից: Հանդիպմանը մասնակցել են մոտ 80 պատվիրակություններ, որոնցից 30-ը ներկայացված են եղել արտգործնախարարների մակարդակով: Հանդիպմանը հրավիրված չեն եղել Թուրքիան ու Ադրբեջանը:

Նախարարական հանդիպմանը բացման խոսքով հանդես է եկել ԱՄՆ Պետքարտուղար Պոմպեոն, ով շեշտել է, որ տվյալ միջոցառումն արտահայտում է ԱՄՆ վարչակազմի ու Նախագահ Թրամփի առաջնահերթությունները՝ աշխարհում կրոնական ազատությունների պաշտպանությանը աջակցելու ուղղությամբ: Վերջինս նաև նշել է, որ առաջին անգամ գումարված այս հանդիպումը ամենամյա բնույթ է կրելու:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես է եկել նաև ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսը:

Նախարարական հանդիպման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը կարճատև զրույց է ունեցել ԱՄՆ Պետքարտուղար Պոմպեոյի հետ՝ ներկայացնելով Հայաստանում ապրիլ-մայիս ամիներին տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները և կարևորելով ԱՄՆ-Հայաստան երկկողմ օրակարգը նոր թեմաներով հագեցնելու անհրաժեշտությունը: Կողմերն անդրադարձ են կատարել նաև առաջիկայում ԱՄՆ Նախագահ Թրամփի ու ՀՀ վարչապետ Փաշինյանի միջև հանդիպում կազմակերպելու հարցին: Պետքարտուղարը խոստացել է երկկողմ հանդիպման կազմակերպման վերաբերյալ հարցը քննարկել Նախագահի աշխատակազմի հետ:

2018թ. հոլիսի 27-ին լիագումար նիստում ելույթ է ունեցել նաև հայկական պատվիրակության ղեկավար, ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը: Վերջինս նիստի մասնակիցներին ներկայացրել է կրոնական ազատությունների պաշտպանության հարցով արձանագրված հաջողություններն ու «Խղճի ազատության ու կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, ինչպես նաև անդրադարձել է Մերձավոր Արևելքում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ իրականացվող բռնաճնշումների ու Ադրբեջանում մարդու իրավունքների ոտնահարման և հայկական հոգևոր ժառանգության ոչնչացման հարցերին: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը ներկայացրել է նաև այս տարվա ապրիլ- մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած թավշյա, ոչ բռնի հեղափոխությանն ու նշել, որ դրա արդյունքում ստեղծված նոր Հայաստանում հանդուրժողականությունն ամենակարևոր արժեքն է: Նախարարի խոսքով, Հայաստանի Հանրապետությունը 27 տարվա անկախ պետականության պատմություն ունի դեռ, սակայն պետք է ասել, որ ՀՀ-ում որևէ ռադիկալ վերաբերմունք կրոնական տարբեր ուղղությունների նկատմամբ չի դրսևորվել, ինչի մասին են վկայում Հայաստանի մարդու

իրավունքների պաշտպանի, միջազգային տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների և հատկապես ԱՄՆ Պետքարտուղարության՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցները: Ելույթի ավարտին նախարար Զեյնալյանը հավաստիացրել է, որ Հայաստանի նոր կառավարությունն անելու է առավելագույնը՝ Հայաստանում ապրող յուրաքանչյուր անձի իրավունքներն ու ազատությունները երաշխավորելու, ապահովելու և պաշտպանելու համար:

Հանդիպման արդյունքում հայկական պատվիրակությունը ստորագրել է ԱՄՆ կողմից առաջարկված երեք թեմատիկ հայտարարությունները՝ աստվածանարգության քրեականացման, ահաբեկչական խմբավորումների կողմից կրոնական ազատությունների չարաշահման ու հակաահաբեկչական գործողությունները որպես կրոնական ազատությունը ճնշող գործիք օգտագործելու մասին:

Վաշինգտոն կատարած այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը մի շարք հանդիպումներ է ունեցել ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարը հանդիպել է Միջազգային կրոնական ազատությունների հարցերով ԱՄՆ հատուկ հանձնարարություններով դեսպան Սեմյուել Բրաունբեքի (ԱՄՆ Պետքարտուղարություն), ԱՄՆ Գլխավոր դատախազի փոխտեղակալ Բրյուս Շվարցի (ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտ), ԱՄՆ Պետքարտուղարի՝ Թմրամիջոցների շրջանառության ու իրավապահ գործողությունների հարցերով փոխտեղակալի պաշտոնակատար Բրուք Դերբիի, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի հարցերով ԱՄՆ Պետքարտուղարի փոխտեղակալի պաշտոնակատար պարոն Մայքլ Քելերի, «Ամնեսթի ինթերնեյշընալ» իրավապաշտպան կազմակերպության Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի հարցերով տնօրեն Դանիել Բոլսոնի և ԱՄՆ Միջազգային

զարգացման գործակալության ադմինիստրատորի՝ Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով փոխտեղակալ պարոն Ալեքս Սոկոլովսկու հետ:

Հարգանքով՝ **Արտակ Զեյնալյան**

Invalid signature

X

Artak Zeynalyan